# ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*...րծեր ամբիոններից հաճախ է ...ում այն կարծիքը, որ հայ ժողովրդի ամենամեծ հարստությունը գիտական ...ամն է, որն էլ պետք է լինի ...ի զարգացման հիմնական ազդակը*

Սակայն իրականում տրա...ծորեն հակառակ քաղաքա...ություն է վարվում: Գիտու...ն համարվում է ավելորդ բեռ ...ամեն պատեհ առիթ օգտա...վում է՝ կրճատելու նրա ֆի...սավորումը: Բավական է ..., որ այսօր գիտաշխատողի ...տավարձը համակարգում ...նացածրն է՝ 5-12 հազար ..., ինչն էլ պայմանավորում է ...ական գործունեության հա...րժեք արդյունքը: Գիտնականն ...ամենը «սեւ» գործ իրակա...ցնող ռոբոտ է, որն իրավունք ...ի մասնակցելու գիտահետա...տական կառույցի ղեկավարնե... ընտրություններին եւ հանդես ...լու որեւէ կառուցվածքային ...փոխություն կատարելու նա...ձեռնությամբ: Գիտությունը ...կային ղեկավարվում է կարծ...ված նոմենկլատուրայի, պա...տահականորեն իշխանության ...ների մոտ հայտնված պետա...ն պաշտոնյաների կողմից:

Մինչեւ հիմա գիտության ոլոր...ում կառուցվածքային փոփո...թյունների առումով որեւէ տե...շարժ չի նկատվում: Պատա...կան չէ, որ չի ընդունվում նաեւ ...ության մասին օրենքը, թե...ւ այդ դեպքում էլ դժվար թե ո...է արդյունք արձանագրվի, քա...դեռ չի փոխվել գիտական հե...զոտության ընդհանուր գա...փարախոսությունը:

Միանգամայն անհասկանալի ...թե Հայաստանի ԳԱԱ նախա...ի Ֆադեյ Սարգսյանը 8 տարի ...րունակ ինչ առաքելություն էր ...կանացնում ԱԺ-ում: Նա այդ...ս էլ հանդես չեկավ որեւէ օրեն...դրական նախաձեռնությամբ ...մ ծրագրային ելույթով: Ավե..., նրա շուրջը պտտվող որոշ ...ադեմիկոսներ Ֆ.Սարգսյանի ...ժանիքների թվում հատկապես ...շտում են այն, որ նա այս ծանր ...րիներին կարողացավ պահ...ել ԳԱԱ-ն, թույլ չտվեց նրա ...ոհումը եւ, ինչպես ասում են, ...մեն ինչ մնաց իր տեղում: Խոսք ..., ամեն ինչ իր տեղում է: Իսկ ... ներսում ինչ է մնացել, եւ ինստիտուտները ողջամի՞տ են կատարում իրենց անմիջական գործառույթները, այդ մասին ոչ ոք չի խոսում:

Պարզ տրամաբանությունը հուշում է, որ համանման ինստիտուտների միավորումը պետք է կատարվեր պետական անկախության հաստատումից անմիջապես հետո: Մինչդեռ մինչ օրս շարունակվում են երկկողմանի եսասիրական նկրտումները: Պետական պաշտոնյաները չեն ուզում նեղացնել իրենց ազդեցության ոլորտները, իսկ կառույցների ղեկավարները, կատաղի դիմադրություն ցույց տալով, զանազան «տանիքների» օգնությամբ աշխատում են պահպանել իրենց ղեկավար աթոռները: Այս է իշխող տրամաբանությունը:

Սակայն կյանքն անողոք է եւ համառորեն իր պահանջներն է առաջադրում: Գիտության այսօրվա վիճակի վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն հրապարակվում կամ տրվում են նախկին սոցմրցության իներցիային համապատասխան թվեր: Օրինակ, վերջերս ՀԳԱԱ նախագահ Ֆ.Սարգսյանը նշեց, որ այդ համակարգում կա 6000 աշխատակից, իսկ ագրոգիտության համակարգում, ըստ Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի նախագահ Սերգեյ Ղազարյանի, դեռեւս մնացել են 700-ից ավելի գիտնականներ: Ես հավատում եմ այդ թվերին, եթե հիմնվենք աշխատավարձի ցուցակների վրա: Իսկ ռեալ աշխատակիցների թիվը թե՛ մեկ, թե՛ մյուս համակարգում չի անցնում ներկայացված թվի 20-30 տոկոսից:

Գիտության մեջ միջին հաշվով մնացել է նախկին աշխատակազմի 20 տոկոսից ոչ ավելին, առաջ են եկել շենքային հսկայական դատարկ տարածություններ, ժանգոտում եւ ոչնչանում են թանկարժեք լաբորատոր սարքավորումները, աշխատակիցներից հիմնականում մնացել են թոշակառուները (գիտությունը աղետալիորեն ծերանում է), երիտասարդներ չեն գալիս (իսկ ասպիրանտների ընդունելությունը ուղղակի զավեշտ է դարձել եւ հիմնականում ընդունվում են բանակ չգնալու համար): Յուրաքանչյուր ինստիտուտից 10-30 աշխատողների ֆինանսավորելով՝ անիմաստ է պահել նման բազմազանություն, ուստի անհրաժեշտություն է դարձել գիտահետազոտական հիմնարկությունների միավորումը:



Մոտ 10 տարի է, ինչ Հայաստանի գիտությունը հայտնվել է կիսամեռ, անդամալույծ վիճակում, եւ ինստիտուտներն ուղղակի վերածվել են յուրատեսակ բարեգործական կազմակերպությունների, որտեղից մարդիկ ստանում են իրենց չնչին «նպաստը»: Ամենազարմանալին այն է, որ շատերին այդ էլ է ձեռք տալիս, քանի որ ոչինչ չեն անում, բայց ինչ-որ բան, այնուամենայնիվ, ստանում են:

Առավել զարմանալի է իշխանությունների վերաբերմունքը: Քաջատեղյակ լինելով իրավիճակին՝ նրանք ոչինչ չեն ձեռնարկում գոնե մի բան փրկելու համար: Մնում է միայն կարծել, որ գիտահետազոտական կառույցները դիտավորյալ թողնվել են բախտի քմահաճույքին, այսինքն՝ դանդաղ մահվան: Գիտահետազոտական կառույցների միավորումը այլընտրանք չունի, եւ միայն այդ կերպ կարելի է կատարել առաջին կենսունակ քայլը անկախ Հայաստանի գիտության վերակենդանացման ուղղությամբ:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է

*1. Խոր ճգնաժամի մեջ հայտնված գիտահետազոտական աշխատանքների վերակենդանացման եւ աշխուժացման միակ ելքը համանման կառույցների միավորումն է:*

*2. Միավորված գիտահետազոտական կառույցներում պետք է վերականգնվի բնականոն աշխատանքային ռեժիմը: «Հեռակա» աշխատողները եւ տարբեր շառավղային կապերով ցուցակների մեջ հայտնված պատահական մարդիկ պետք է մաղվեն հաստիքացուցակներից, ինչը հնարավորություն կտա գիտությանը հատկացված նույնիսկ այսօրվա ֆինանսների պայմաններում իրական աշխատողների աշխատավարձը բարձրացնել 3-4 անգամ:*

*3. Փորձագիտական հանձնաժողովներում ներգրավել անաչառ, ազգային մտածողություն ունեցող, տաղանդավոր ու ազնիվ գիտնականներին՝ մասնագիտացված գիտխորհուրդների երաշխավորությամբ:*

*4. Թեմաներին հատկացվող աշխատավարձի հիմնադրամը եւ այլ ծախսերի իրացումը դնել գիտական խորհուրդների պատասխանատվության եւ վերահսկողության տակ:*

*5. Գիտահետազոտական բոլոր կառույցների (ակադեմիական թե ճյուղային) տնօրենների ու փոխտնօրենների պաշտոնավարության ժամկետը սահմանել 4 տարի, իսկ նրանց ընտրության իրավունքը միանշանակորեն վերապահել կոլեկտիվներին:*

*6. Գիտությունը պետք է ֆինանսավորվի ըստ ճյուղերի եւ ոչ թե ըստ առանձին թեմաների:*

ՎՅԱՉԵՍԼԱՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ